ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 մայիսի 2019թ. թիվ 300-Ա

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԵԲԵԴԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ
ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 4, 7, 9, 11, 15 և 17 կետերը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Դեբեդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական և ծնողական խորհուրդների նախագահների և Դեբետ համայնքի ղեկավարի 04.04.2019թ. գրությունները՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. մարտի 15-ի «Լոռու մարզի դպրոցների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» թիվ 75-Ա որոշման հավելվածի «ՀՀ Լոռու մարզի Դեբեդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ մասում՝

1. «Մատինյան Պարույր» բառերը փոխարինել «Ղազարյան Գայանե» բառերով, «Բաբայան Լիանա» բառերը՝ «Մատինյան Պարույր» բառերով և «Քոչարյան Արարատ» բառերը՝ «Ղազարյան Աշոտ» բառերով:

2. Վերահաստատել մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Վահան Հարությունյանի, ծնողական խորհրդի կողմից առաջադրված Թերեզա Սիմոնյանի և մարզպետի կողմից առաջադրված Սուրեն Պողոսյանի թեկնածությունները:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. մայիսի 3
ք.Վանաձոր